25.129

ՀԱՅԿՈՈՊ—ՖԻՆ. ՊԼԱՆ. ԿԱՌԱՎԱՐՉՈՒԹՅՈՒՆ

ԽՍՀՄ ՊԵՏԱԿԱՆ ԲԱՆԿԻ ՎԱՐՉՈՒԹՅԱՆ

# ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ՑՈՒՑՄՈՒՆՔՆԵՐԸ ԱՌԵՎՏՐԻ ՎԱՐԿԱՎՈՐՄԱՆ ՆՈՐ ԿԱՐԳԻ ՄԱՍԻՆ

(Համաձայն 1936 թվ. հունիսի 4-ի օրենքի)

ՀՈՆՐԱՅԻՆ ԳՐԱԴԱՐԱՆ
Публ. Библиотека
ՀՍԽՀ-ССР
им. А. Мясникяна
Ա. ՄՅԱՍՆԻԿՅԱՆԻ ԱՆՎԱՆ

ԵՐԵՎԱՆ
1936

11.09.2013

25.129

Տեխն. ձևավոր. յեվ սրբագրեց Ա. ՀԱԽՎԵՐԴՅԱՆ

Սևան-Զանգվինի տպարան. Ռեկլամ-Հրատ. Բյուրո

Գլավլիտ № 2194. Պատվեր № 27—164 Տիրաժ 800

05 JAN 2010

332
Ա-11

Առևտրական կազմակերպություններին, համաձայն 4-ն հունիսի օրենքի վարկավորման նոր կարգին անցկացնելիս, Պետական Բանկի գրասենյակների և բաժանմունքների կառավարիչները պետք է ղեկավարվեն հետևյալ ցուցմունքներով.

## I. ԻՆՉՊԻՍԻ ԱՌԵՎՏՐԱԿԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ՊԵՏՔ Է ԱՆՑԿԱՑՎԵՆ ՎԱՐԿԱՎՈՐՄԱՆ ՆՈՐ ԿԱՐԳԻՆ

1. Վարկավորման նոր կարգին անցկացվում այն առևտրական կազմակերպությունները, վորոնք աշխատում են շահավետ, այսինքն՝ վերջին յեռամսյակում առևտրական գործունեյության վնաս չունեն (համեմատվում են առևտրական գործունեյության հետևանքներն ըստ յեռամսյակի սկզբի և վերջին բալանսների. վոչ-առևտրական գործունեյության հետևանքները հաշվի չեն առնըվում) և ունեն սեփական միջոցներ ապրանքների վճարման մեջ պարտադիր չափով մասնակցելու համար։

Վոչ-առևտրական ձեռնարկները (մերձքաղաքային տնտեսությունները, ճաշարանները, հացաթխումը և այլն) պետք է առանձնացված լինեն և աշխատեն տնտեսական հաշվարկով, ունենան ինքնուրույն բալանս ու առանձին հաշվարկային հաշիվ Բանկում։ Բացառություն թույլատրվում է շատ փոքր վոչ-առևտրական ձեռնարկների նկատմամբ։

2. Այն առևտրական կազմակերպությունների ցուցակը, վորոնք պետք է անցնեն վարկավորման նոր կարգին սկսած 1936 թվ. սեպտեմբերի 1-ից, ինչպես և այն առևտրական կազմակերպությունների ցուցակը, վորոնք պետք է անցնեն վարկավորման նոր կարգին հետագայում, հաստատվում են Պետբանկի Վարչության կողմից՝ համաձայնեցնելով ԽՍՀՄ Ներքառժողկոմատի, Ցենտրոսոյուզի ու տնտեսական ժողկոմատների գլխավորների հետ։

## II. ԻՆՉՊԵՍ Է ՍԱՀՄԱՆՎՈՒՄ ՍԵՓԱԿԱՆ ՄԻՋՈՑՆԵՐԻ ՊԱՐՏԱԴԻՐ ՄԱՍՆԱԿՑՈՒԹՅԱՆ ՉԱՓԸ ԱՊՐԱՆՔՆԵՐԻ ՎՃԱՐՄԱՆ ՄԵՋ

3. ԽՍՀՄ ԺԿԽ հաստատած հրահանգի 1-ին հոդվածը նախատեսում է, որ «ամեն մի առևտրական կազմակերպության համար, որն անց է կացվում վարկավորման համաձայն ԽՍՀ Միության ԺԿԽ 1936 թվ. հունիսի 4-ի որոշման, սահմանվում է սեփական միջոցների մասնակցության այն պարտադիր չափը, որը նա պետք է ունենա ապրանքների վճարման մեջ»:

4. ԽՍՀՄ ԺԿԽ հաստատած հրահանգի 2-րդ հոդվածը նախատեսում է, որ «սեփական միջոցների մասնակցության պարտադիր չափը յուրաքանչյուր յեռամսյակում սահմանում է Պետական Բանկի հանրապետական, յերկրային կամ մարզային գրասենյակը՝ համաձայնեցնելով այդ առևտրական սիստեմների համապատասխան կենտրոնների հետ» (այսինքն՝ պետական առևտրի գծով՝ համապատասխան կենտրոնի հետ կամ համամիութենական առևտրական միավորումների համապատասխան մարզային գրասենյակների հետ, կոոպերացիայի գծով՝ սպառկոոպերացիայի մարզային (հանրապետական) միության հետ, ոգս-երի գծով՝ համապատասխան Գլխավորի լիազորի հետ):

Պետառևտրի կենտրոնի հետ տարաձայնություններ լինելու դեպքում խնդիրը լուծում է Պետբանկի մարզային (յերկրային կամ հանրապետական) գրասենյակը քաղ-մարզ (յերկրային կամ հանրապետական) Ներքաղի հետ համաձայնության գալու միջոցով:

5. ԽՍՀՄ ԺԿԽ հաստատած հրահանգի 3-րդ հոդվածը նախատեսում է, որ «ապրանքների վճարման մեջ սեփական միջոցների մասնակցության նվազագույն չափը պետք է կազմի.

ա) Պետառևտրի կազմակերպությունների և ՈՐՍ-երի համար 30%,

բ) Շրջսպառկոոպմիությունների, Շրջկոոպների, շինանյութերի պահեստի և կուլտ-խանութների համար 20%,

գ) Հանրապետական (յերկրային, մարզային) սպառկոոպմիության մեծաքանակ բազաների և շրջխանութների համար 15%»:

6. Նշված նորմաները (չափերը) սահմանված են ԽՍՀՄ ԺԿԽ հաստատած հրահանգի մեջ, յելնելով նրանից, որ սեփական միջոցների մասնակցության այդ նորմաները նախատեսված են 1936 թվ. ֆինանսական պլանի մեջ և, հետևաբար, կլինեն նվազագույն նորմաներ առ 1-ն հունվարի 1937 թվ.

ԽՍՀՄ ԺԿԽ հաստատած հրահանգը նաև նախատեսում է, որ 1936 թվ. III և IV յեռամսյակների համար Բանկն իրավունք ունի սահմանելու սեփական շրջանառու միջոցների պարտադիր մասնակցության նվազեցված չափ ապրանքների վճարման մեջ:

ԽՍՀՄ ԺԿԽ հաստատած հրահանգի 4-րդ հոդվածը նախատեսում է, որ «Պետական Բանկի հանրապետական, յերկրային կամ մարզային գրասենյակը սահմանում է սեփական միջոցների մասնակցության նվազեցված չափ այն առևտրական կազմակերպությունների համար, վորոնք դեռ ևս չեն կարողացել կուտակել սեփական միջոցներ այն չափով, վորն անհրաժեշտ է 3-րդ հոդվածում նշված մինիմումը լրացնելու համար: Սեփական միջոցների մասնակցության այդ նվազեցումը, սակայն, կատարվում է այն հաշվով, վորպեսզի այդ մասնակցությունը չլինի ավելի ցածր սեփական միջոցների այն նորմատիվից, վորը գործելիս է յեղել առևտրական կազմակերպությունը վարկավորման անցկացնելու պահին՝ համաձայն ԽՍՀ Միության ԺԿԽ 1936 թվ. հունիսի 4-ի վորոշման:

Ծանոթություն.—Այն կազմակերպությունների համար, վորոնք որենքով թույլատրված սահմաններում կատարում են ապրանքների գնումներ իրենց վաճառքից ստացված գումարից, սեփական միջոցների մասնակցության չափը նվազեցվում է 2—3 տոկոսով»:

Սեփական միջոցների մասնակցության ամենանվազագույն չափը, վորից ցածր լինելու դեպքում մարզային գրասենյակը չի կարող անցկացնել առևտրական կազմակերպությունը վարկավորման նոր կարգին, սահմանվում է 1936 թվ. III և IV յեռամսյակների համար 12%-ի չափով բոլոր առևտրական կազմակերպությունների համար:

Պետական առևտրի կազմակերպությունների նկատմամբ սեփական միջոցների մասնակցությունը մինչև 1936 թվ. նոյեմբերի 1-ը պետք է հասցվի 20%:

Միաժամանակ մարզային գրասենյակը պետք է ստանա առևտրական կազմակերպությունից պլան, համաձայն վորի նրա

սեփական միջոցները պետք է հասցվեն այն չափին, վորը նախատեսված է ԽՍՀՄ ԺԿԽ հաստատած հրահանգի 3-րդ հոդվածով.

Այն բոլոր կազմակերպությունների մասին, վորոնց կուտակումների, բյուջետային հատկացումների և ներքին ռեսուրսների մոբիլիզացիայի պլանը չի ապահովում այդ պահանջը, Պետբանկի մարզային գրասենյակը պետք է անմիջապես հարց դնի տեղական մարմինների առաջ և հայտնի Պետական Բանկի վարչությանը։

Ծանոթություն.—Այն դեպքերում, յերբ սեփական միջոցների նորմատիվը, վորը գործելիս է յեղել մինչև վարկավորման նոր կարգին անցնելը, ցույց է տալիս սեփական միջոցների մասնակցության ավելի բարձր տոկոս ապրանքների վճարման մեջ, քան այն նվազագույն նորմանները, վորոնք նշված են սույն կետում, մարզային գրասենյակը իրավունք չունի իջեցնել մասնակցության չափն ավելի ցածր, քան մինչև այն մակարդակը, վորը համապատասխանում է գործող նորմատիվին։

Այդ ստուգվում է հետևյալ ճանապարհով. սեփական միջոցների նորմատիվը, վորը գործելիս է յեղել առևտրական կազմակերպությունը վարկավորման նոր կարգին անցկացնելու պահին, համեմատվում է սեփական շրջանառու միջոցների բացարձակ գումարի հետ, վորը տեղավորված է դրամական միջոցների, այլ ակտիվների և ապրանքների մեջ այն բալանսով, համաձայն վորի կատարվում է առևտրական կազմակերպությունը վարկավորման նոր կարգին անցկացնելը։

7. Յեթե առևտրական կազմակերպության սեփական միջոցների փաստացի գումարն ապահովում է մասնակցությունն այնպիսի չափով, վորը բարձր է ԽՍՀՄ ԺԿԽ հաստատած հրահանգով նախատեսված նվազագույն նորմաներից, Բանկի մարզային գրասենյակը սահմանում է մասնակցության չափը սեփական շրջանառու միջոցների փաստացի գումարին համապատասխան։

Բանկը կարող է թույլատրել սեփական միջոցների վերաբաշխում միմիայն այն դեպքերում, յերբ այդ միջոցների փաստացի գումարը գերազանցում է ԽՍՀՄ ԺԿԽ հաստատած հրահանգի 3-րդ հոդվածով նախատեսված նորմաները, այսինքն՝ Պետառի կազմակերպությունների և ОРС-ների համար 30%, շրջսպառկոոպմիությունների, շրջկոոպների, շինանյութերի պահեստների և կուլտխանութների համար 20%, հանրապետական, յերկրային ու մարզային սպառկոոպմիությունների մեծաքանակ բազաների և շրջխանութների համար 15%։



## III. ԻՆՉՊԵՍ Ե ՎՈՐՈՇՎՈՒՄ ՍԵՓԱԿԱՆ ՄԻՋՈՑՆԵՐԻ ՄԱՍՆԱԿՑՈՒԹՅԱՆ ՏՈԿՈՍՆ ԱՊՐԱՆՔՆԵՐԻ ՎՃԱՐՄԱՆ ՄԵՋ

8. Սեփական միջոցների չափի վորոշման հիմքը հանդիսանում է առ 1-ն հուլիսի բալանսը։

Հետագայում՝ սեփական միջոցների չափի վորոշումը այն կազմակերպությունների համար, վորոնք անցկացվում վարկավորման նոր կարգին կամ վորոնց մասնակցությունը ստուգման է յենթարկվում, պետք է կատարվի համաձայն վերջին հաշվետու բալանսի։

9. Սեփական շրջանառու միջոցներն ու կայուն պասսիվներն ընդունվում են այն դրությամբ, վորը կա առ 1-ն հուլիսի բալանսով կամ այն ամսաթվի բալանսով, վորն ընդունվել է հիմք վարկավորման նոր կարգին անցկացնելու համար։

10. Սեփական շրջանառու միջոցների տեղավորումը վորոշվում է բալանսի հիման վրա հետևյալ ճյուղերով.

ա) դրամական միջոցներ,

բ) այլ ակտիվներ,

գ) ապրանքներ,

դ) դեբիտորական պարտքի գերազանցումը կրեդիտորականից այն դեպքերում, յերբ այդ տեղի ունի։

### Ա. Դրամական միջոցները վորոշվում են հաշվետու բալանսով.

Ծանոթություն.—Այն դեպքերում, յերբ նախորդ 3—4 ամիսների բալանսների հիման վրա պարզվում է, վոր առ 1-ն հուլիսի բալանսով (կամ այն ամսաթվի բալանսով, վորը հիմք է ընդունվել կազմակերպությունը վարկավորման նոր կարգին անցկացնելու համար) դրամական միջոցների մնացորդը հատուկ պայմանների հետևանքով (ինկասսացիայի բացակայության, առևտրի խիստ բարձրացման, դրամների հանձնումը բանկին ուշացնելու և այլն) հանդիսանում է բարձրացած և պատահական հանդեպ սովորականի,—Բանկի բաժանմունքի կառավարիչը մտցնում է ուղղում հաշվի առնելով դրամական միջոցների մնացորդը համաձայն նախորդ բալանսների։

Նույն չափով այդ վերաբերում է այն դեպքերին, յերբ դրամական միջոցների մնացորդը հանդիսանում է ցածրացած։

## Բ. Այլ ակտիվները փոխադրվում են հաշվետու բալանսով

*Ծանոթություն.—Այլ ակտիվների անվան տակ ընդունվում են՝ առհաշիվ գումարները, գալիք ժամանակի այն ծախսերը, վորոնք պետք է մարվեն հաշվետու տարում, տարան, տնտեսական և այլ նյութերը, քիչարժեքավոր գույքը և մասնագիտական հագուստը:*

## Գ. Ապրանքները ցանցում յեվ ճանապարհում փոխադրվում են բալանսով հետեվյալ կերպ

*Ցանցում և ճանապարհում համաձայն բալանսի յեղած ապրանքների գումարից հանվում են-*

*ա) չիրացված հավելումի գումարը, վորը կա բալանսում,*

*բ) ապրանքների սեզոնային կուտակումները, վորոնք ընդունվում են այն գումարով, վորը հավասար է Բանկին ունեցած պարտքին ըստ սեզոնային (նպատակային) վարկերի:*

## Դ. Դեբիտորական պարտքի գերազանցումը կրեդիտորականից այն դեպքերում, յերբ այդ տեղի ունի՝ փոխադրվում է հաշվետու բալանսով, յեվ այդ գումարով պակասեցվում է փաստացի սեփական շրջանառու միջոցների չափը:

*11. Սեփական շրջանառու միջոցների և կայուն պասսիվների փաստացի գումարից (այսինքն՝ սեփական միջոցների գումարից հանած այն միջոցները, վորոնք ներդրված են վոչ-առևտրական գործունեյության մեջ. արտադրական ձեռնարկների մեջ, հասարակական սննդի մեջ, մերձքաղաքային տնտեսության մեջ, արտաշրջանառու ակտիվների մեջ և այլն), վորը կա առ 1-ն հուլիսի հաշվետու բալանսում կամ այն ամսաթվի բալանսում, վորն ընդունված է հիմք վարկավորման նոր կարգին անցկացնելու համար, հանվում են (այն գումարներով, վորոնք վորոշված են համաձայն 10-րդ կետի).*

*ա) դրամական միջոցները,*

*բ) այլ ակտիվները,*

*գ) Թխված հացի մնացորդը,*



*դ) դեբիտորական պարտքի գերազանցումը կրեդիտորականից այն դեպքերում, յերբ այդ տեղի ունի և այլն:*

*Մնացորդը հանդիսանում է մի գումար, վորը մասնակցում է ապրանքների վճարման մեջ:*

*Բանկի բաժանմունքը հաշվում է, սեփական միջոցների ներդրված գումարը վոր տոկոսն է կազմում ապրանքների մնացորդի գումարի նկատմամբ, վորը վորոշված է համաձայն 10-րդ կետի:*

*Յեթե այդ տոկոսը* ցածր *չէ 6-րդ կետով սահմանված պարտադիր նորմայից, Բանկի բաժանմունքը ներկայացնում է այդ տոկոսը, վորպես մասնակցության պարտադիր չափ համապատասխան առևտրական կազմակերպության համար, Պետբանկի մարզային գրասենյակին ի հաստատություն:*

*Յեթե այդ տոկոսը* ցածր *է 6-րդ կետով սահմանված պարտադիր նորմայից, Բանկի բաժանմունքը մերժում է առևտրական կազմակերպությանը վարկավորման նոր կարգին անցկացնելու մինչ այն, քանի նա չի կուտակի սեփական միջոցներ անհրաժեշտ մինիմումի լրացման չափով:*

### Օրինակ.

*I. Առևտրական կազմակերպության բալանսը առևտրական գործունեյության մասով.*

| | | | |
|---|---|---|---|
| Ապրանքային մնացորդները ցանցում և ճանապարհին . . . | 330 հ. ռ. | Սեփական շրջանառու միջոցները . . . | 90 հ. ռ. |
| Դրամական միջոցները . . . . | 15 » | Պարտք Պետբանկին ըստ II տեսակի վարկի ժամկետանց փոխառությունների հետ միասին . . | 200 հ. ռ. |
| Այլ ակտիվները . . . . . . | 25 » | Պարտք Պետբանկին ըստ սեզոնային նպատակային փոխառությունների | 50 հ. ռ. |
| Դեբիտորները . . . . . . . | 60 » | Կրեդիտորներ . . . | 80 » |
| | | Չիրացված հավելում . | 10 » |
| Ընդամենը . . . . . . . | 430 հ. ռ. | Ընդամենը . , . . | 430 հ. ռ. |

Այստեղից՝

II. Դրամական միջոցները կազմում են . . . . . . . . . . 15 հ. ռ.
III. Այլ ակտիվները կազմում են . . . . . . . . . . . . 25 հ. ռ.
IV. Սեփական շրջանառու միջոցները դուրս չեկած դրամական միջոցները և այլ ակտիվները կազմում են՝ 90 հ. ռ. — (15 + 25) = . . . . . . . . . . . . . . . . . 50 հ. ռ.
V. Ապրանքների մնացորդները հանած՝
ա) չիրացված հավելումը,
բ) սեզոնային պաշարները,
կազմում են (330—10—50) , . . . . . . . . . . . . . 270 հ. ռ.
VI. Հնարավոր մասնակցության չափը (50 : 270) . . . . . 18,5%
VII. Ինքնագնումների տեսակարար կշիռը առևտրի մեջ՝ 10%, վորը տալիս է հիմք իջեցնելու մասնակցության չափը . 2—3%-ով
VIII. Բանկի բաժանմունքը ներկայացնում է դրասենյակին հաստատման համար առաջարկություն՝ սահմանել սեփական միջոցների մասնակցման չափն ապրանքների վճարման մեջ 16%:

## IV. ՆՈՐ ԿԱՐԳԻՆ ԱՆՑԿԱՑՎԱԾ ԱՌԵՎՏՐԱԿԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ՎԱՐԿԱՎՈՐՎՈՒՄ ԵՆ ՀԱՏՈՒԿ—ՓՈԽԱՏՎՈՒԹՅԱՆ ՀԱՇՎՈՎ

12. Նրանից հետո, յերբ Պետբանկի դրասենյակը թույլատրել է իր բաժանմունքին անցկացնել համապատասխան առևտրական կազմակերպությանը վարկավորման նոր կարգին, Պետբանկի բաժանմունքը, ԽՍՀՄ ԺԿԽ հաստատված հրահանգի 5-րդ հոդվածին համապատասխան, առևտրական կազմակերպության համար բացում է հատուկ փոխատվության հաշիվ և այդ հաշվից հատուցում է.

ա) Վճարման պահանջագրերը, վորոնք առևտրական կազմակերպության կողմից ակցեպտի յեն յենթարկված, նաև հաշվարկային չեկերն ու վճարման հանձնարարությունները, վորոնք տրված են ապրանքների դիմաց.

բ) Պետբանկին տված ժամկետային պարտավորագրերը:

Այդ հաշվին է գրվում առևտրից ստացած գումարը (բացի հավելումներից, ու հատուկ վերադիրներից), վորը հաշվվում է սեփական միջոցների մասնակցության դիմաց և Բանկին տված պարտավորագրերի վճարումների համար:



13. Հատուկ փոխատվության հաշիվը բացելիս Բանկի բաժանմունքը վերցնում է առևտրական կազմակերպությունից հայտարարություն-պարտավորագիր սահմանված ձևով (տես՝ հավելված ձև № 1):

## V. ՎԱՐԿԱՎՈՐՄԱՆ ԱՆՑՆԵԼՈՒ ԿԱՐԳԸ՝ ՀԱՄԱՁԱՅՆ 1936 ԹՎ. ՀՈՒՆԻՍԻ 4-Ի ՈՐԵՆՔԻ

14. Առևտրական կազմակերպություններին վարկավորման նոր կարգին անցկացնելիս, Բանկը սեպտեմբերի 1-ից հատուկ փոխատվության հաշիվ բացելու հետ միաժամանակ փոխանցում է յերկրորդ կարգի վարկով յեղած պարտքը համապատասխան փոխատվության հաշվից, վորը ծածկվում է հատուկ փոխատվության հաշվին:

15. Այն առևտրական կազմակերպությունների նկատմամբ, վորոնք ունենալով ժամկետին չհաստատված վճարման պահանջգրեր ու հաշիվ-ֆակտուրաներ (№ 2 քարտոտեկայում) անցկացվեն վարկավորման նոր կարգին, Բանկի բաժանմունքը պետք է սահմանի այնպիսի մի ռեժիմ (կարգ), վորի համաձայն ապահովվի սեփական միջոցների ամենորյա մասնակցությունն ապրանքների վճարման մեջ մինչև այն ժամանակ, քանի վոր № 2 քարտոտեկան լուծարքի չի յենթարկվել, բայց վոչ ավելի սեպտեմբերի 11-ից:

16. Սեպտեմբերի 1-ից հետո ակցեպտի յենթարկված վճարման պահանջագրերը, ինչպես և սեպտեմբերի 1-ից հետո Բանկում ստացվող հաշվարկային չեկերն ու վճարման հանձնարարությունները, տեղավորվում են № 1 քարտոտեկայում մինչև որենքով սահմանված հատուցման ժամկետի հասնելը:

17. Առևտրական կազմակերպությունը № 2 քարտոտեկայում վճարման փաստաթղթեր չունենալու դեպքում՝ վճարման պահանջագրերը, հաշվարկային չեկերն ու վճարման հանձնարարությունները, վորոնք գտնվում են № 1 քարտոտեկայում, վեցորյակի ընթացքում Բանկի կողմից հատուցվում են հատուկ փոխատվության հաշվից անմիջապես, հենց վոր հասնում է վճարման ժամկետը:

## VI. ԻՆՉՊԵՍ Է ԿԱՏԱՐՎՈՒՄ ԱՊՐԱՆՔՆԵՐԻ ՎՃԱՐՈՒՄԸ ՀԱՏՈՒԿ ՓՈԽԱՏՎՈՒԹՅԱՆ ՀԱՇՎԻՑ

*18. Բանկի բաժանմունքն ընդունում է հատուցման համար ակցեպտի յենթարկված վճարման պահանջագրերը, հաշվարկային չեկերն ու վճարման հանձնարարությունները:*

*Դրա հետ միասին պետք է խիստ կերպով պահպանվեն ԱԳԽ-ի 1936 թվ. հուլիսի 11-ի վորոշման 3-րդ հոդվածով նախատեսված կանոններն այն մասին, վորպեսզի հաշիվ-ֆակտուրայի մեջ չմիացվեն ապրանքների տարբեր խմբերը վարկավորման ժամկետներին համաձայն:*

*Առևտրական կազմակերպությունն ստանալով այնպիսի հաշիվ-ֆակտուրա, վորը դուրս է գրված նշված կանոնների խախտումով, պարտավոր է մինչև վճարման յենթակա համապատասխան փաստաթղթի ակցեպտի ժամկետն անցնելը նախազգուշացնել Բանկին այդ մասին:*

*Բանկի բաժանմունքը ստանալով այդպիսի տեղեկանք առևտրական կազմակերպությունից, անմիջապես հեռագրով հայտնում է այդ մասին Բանկի այն բաժանմունքին, վորն ընդունել է մատակարարի ինկասսո հանձնարարությունը՝ ժամկետից շուտ ճանապարհում գտնվող գումարների դիմաց տրված փոխատվությունը հետ ստանալու համար:*

*Յեթե առևտրական կազմակերպությունը չի տեղեկացրել Բանկին վոչ ճիշտ դուրս գրված հաշիվ-ֆակտուրայի մասին և մտցրել է նշված հաշիվ-ֆակտուրան փաստաթղթերի ռեեստրի (ցուցակի) մեջ, վորոնք հատուցվել են վեցորյակում հատուկ փոխատվության հաշվից,—Բանկի բաժանմունքը, հայտնաբերելով այդ, հանում է այդպիսի հաշիվ-ֆակտուրան ռեեստրից:*

## VII. ԻՆՉՊԵՍ ԵՆ ՀԱՏՈՒՑՎՈՒՄ ՀԱՇԻՎՆԵՐՆ ՈՒ ՎՃԱՐՄԱՆ ՀԱՆՁՆԱՐԱՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ՀԱՑԱԲՈՒԼԿԱՅԻՆ ԹԽՎԱԾՔՆԵՐԻ ՀԱՄԱՐ

*19. Հացաբուլկային թխվածքների համար դուրս գրված հաշիվները, հավասարապես ինչպես և վճարման հանձնարարությունները (վորոնք առևտրական կազմակերպության սահմանված*



*կարգով տալիս են հացաբուլկային թխվածքները վճարելու համար միջին—որական գնման պլանին համապատասխան) հատուցվում են Բանկի կողմից հատուկ փոխատվության հաշվից անմիջապես որինական ժամկետներում, վորոնք նախատեսված են հացավաճառող և հացաթխող կազմակերպությունների միջև կնքված պայմանագրերով:*

*ԽՍՀՄ ԺԿԽ 1936 թվ. հունիսի 4-ի վորոշման համապատասխան հացաբուլկային թխվածքների համար տրված հաշիվների նկատմամբ վճարման տարկետումը չի տարածվում:*

*Հացաբուլկային թխվածքների համար տրված հաշիվներն ու վճարման հանձնարարությունները Բանկի կողմից հատուցվում են հատուկ փոխատվության հաշվից՝ անկախ Պետբանկի և առևտրական կազմակերպության միջև յեղած միացյալ բոլոր հաշիվների և գործարքների դրությունից:*

*Հացաբուլկային թխվածքների համար տրված հաշիվներն ու վճարման հանձնարարությունները Բանկի կողմից հատուցվում են հատուկ փոխատվության հաշվից՝ անկախ ժամկետանց պարտքի առկայությունից և նույնիսկ այն կազմակերպության՝ վորը ժամանակավորապես վորև է պատճառներով հանված է վարկավորումից:*

## VIII. ԻՆՉՊԵՍ ԵՆ ՁԵՎԱԿԵՐՊՎՈՒՄ ԱՅՆ ՓՈԽԱՏՎՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ, ՎՈՐՈՆՔ ՏՐՎԵԼ ԵՆ ԱՌԵՎՏՐԱԿԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆԸ ՀԱՏՈՒԿ ՓՈԽԱՏՎՈՒԹՅԱՆ ՀԱՇՎԻՑ

*20. ԽՍՀՄ ԺԿԽ հաստատած հրահանգի 6-րդ հոդվածին համապատասխան. «Վեց որը մեկ անգամ առևտրական կազմակերպությունը ներկայացնում է Պետական Բանկին մեկ ռեեստր, վորտեղ նշվում են անցած վեցորյակում հատուցված վճարման պահանջագրերը, հաշվարկային չեկերն ու վճարման հանձնարարությունները՝ խմբավորված վարկավորման ժամկետներով (վարկավորման ժամկետների սահմանված շրջանավորման համապատասխան):*

*Ապրանքների ամեն մի խմբի դիմաց, վորի համար ռեեստրի մեջ ցույց է տրված վարկավորման հատուկ ժամկետ, առևտրական կազմակերպությունը տալիս է Բանկին ժամկետային պար-*

տավորագիր Բանկի կողմից հատուցված վճարման պահանջագրերի, հաշվարկային չեկերի ու վճարման հանձնարարությունների գումարով՝ դուրս գալով սեփական միջոցների մասնակցության սահմանված մասը։ Պարտավորագրերի ժամկետները վորոշվում են հաշվելով վերջօրյակի յերրորդ օրից։

21. Առևտրական կազմակերպությունը պարտավոր է ներկայացնել Բանկի բաժանմունքին վերջօրյակում վճարված հաշիվների ռեեստրը, համաձայն կցվող ձևի (տես՝ հավելված ձև № 2), վորի մեջ առանձնացված են.

ա) ապրանքների վճարումը, Բանկի կողմից կատարված ամբողջովին առևտրական կազմակերպության սեփական միջոցների հաշվին,

բ) ապրանքների վճարումը, կատարված ամբողջովին Բանկային վարկի հաշվին,

գ) ապրանքների վճարումը, կատարված սեփական միջոցների մասնակցության և բանկային վարկի պայմաններով։

Ռեեստրը վոչ ճիշտ լրացնելու դեպքում Բանկի բաժանմունքը կասեցնում է հաշվարկների ստուգումը հատուկ փոխատվության հաշվով և դադարեցնում է նոր վճարման պահանջագրերի, հաշվարկային չեկերի ու վճարման հանձնարարությունների հատուցումը հատուկ փոխատվության հաշվից՝ մինչև առևտրական կազմակերպության կողմից ուղղված ռեեստրի ներկայացնելը (ուղղումները ռեեստրի մեջ կատարվում են նույն կարգով, ինչպես և ուրիշ դրամա-հաշվարկային փաստաթղթերի մեջ)։

22. Ռեեստրի մեջ ցույց տված բանկային վարկերի հաշվին հատուկ փոխատվության հաշվից վճարված ապրանքների գումարներին համապատասխան և ռեեստրում ցույց տված վարկերի ժամկետներին համապատասխան՝ Բանկի բաժանմունքը վերցնում է առևտրական կազմակերպությունից ժամկետային պարտավորագրեր 2 օրինակից բաղկացած (ապրանքների ամեն մի խմբի նկատմամբ առանձին, վորի համար սահմանված է վարկի հատուկ ժամկետ)։

23. Ռեեստրի ստուգումից և ժամկետային պարտավորագրերի ընդունումից հետո՝ օպերացիոնիստը տեղավորում է առևտրական կազմակերպությունից ստացած պարտավորագրերի օրինակները (պատճենները) ժամկետային քարտարանի մեջ վճա-



րումները ամսաթվերով, մուտք անելով այդ № 402 հաշվով. պարտավորագրերի իսկական օրինակները ընդհանուր սահմանված կարգով հանձնվում են գրամարկղին։

Վերջօրյակում մեկ անգամ, առևտրական կազմակերպության հետ հատուկ փոխատվության հաշվով հաշվարկները ստուգելուց անմիջապես առաջ, Բանկը հանում է քարտարանից ժամկետներն անցած պարտավորագրերը, դուրս գրելով № 402 հաշվից ժամկետային քարտարանից հանված պարտավորագրերը։

Մինչև հատուկ փոխատվության հաշվով հաշվարկների ստուգումը ժամկետն անցած պարտավորագրերը մնում են ժամկետային քարտարանում։

24. Բանկի բաժանմունքը պարտավոր է ներկայացնել առևտրական կազմակերպության ամեն օր, կամ ըստ համաձայնության ուրիշ ժամկետներում, հատուկ փոխատվության հաշվի քաղվածքը (պատճենները), ընդվորում այն փաստաթղթերը, վորոնք ունեն «վճարված է առանց սեփական միջոցների մասնակցության» կնիքը, պետք է լինեն կցված քաղվածքին։

## IX. ԻՆՉՊԵՍ ՍՏՈՒԳԵԼ ՎՃԱՐՎԱԾ ՓԱՍՏԱԹՂԹԵՐԻ ՌԵԵՍՏՐԸ, ՎՈՐԸ ՆԵՐԿԱՅԱՑՐԵԼ Է ԱՌԵՎՏՐԱԿԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆԸ

25. Ռեեստրը ներկայացնելու ժամանակ պարտադիր ստուգման են յենթակա հետևյալ մոմենտները.

ա) ճիշտ է արդյոք նշված սեփական միջոցների մասնակցության գումարը,

բ) համապատասխանում է արդյոք ռեեստրում ցույց տրված վճարված փաստաթղթերի ընդհանուր գումարը հատուկ փոխատվության հաշվով կատարված գրանցումներին (այդ կատարվում է ռեեստրում ցույց տրված վճարված գումարները հատուկ փոխատվության հաշվի պարտքով գրանցված գումարների հետ համեմատելու ճանապարհով)։

26. Ստուգելու համար, թե արդյոք ճիշտ է առևտրական կազմակերպությունը բաշխում վճարված հաշիվ-ֆակտուրաներն ըստ խմբերի համաձայն վարկի շերտավորված ժամկետների, Բանկի բաժանմունքը պարտավոր է վոչ պակաս ամիսը մեկ անգամ կատարել ընտրովի ստուգում՝ առևտրական կազմակերպու-

թյունների կողմից ռեեստրում հաշիվ-ֆակտուրաներն ըստ վարկի ժամկետների բաշխման ճշտության նկատմամբ։

## X. ԻՆՉՊԵՍ ԿԱՐԳԱՎՈՐԵԼ ԱՌԵՎՏՐԱԿԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ՎՃԱՐՄԱՆ ՈՐԱՑՈՒՑԱԿԸ

27. Որպեսզի առևտրական կազմակերպության վճարման որացուցակն ավելի համապատասխանի առևտրի տատանումներին, վորոնք սովորաբար տեղի յեն ունենում ամսվա միջում կամ յեռամսյակի միջում, Բանկի բաժանմունքի կառավարիչն իրավունք ունի, առևտրական կազմակերպության դիմումի համաձայն, նշանակել վճարումների ժամկետներ աչքի առաջ ունենալով առևտրական կազմակերպության համար ավելի նպաստավոր ամսաթվերը։

Դրա հետ միասին, յեթե պարտավորագրերի վորոշ գումար ընդունվի վորոշ չափով ավելի ուշ ժամկետներով, քան այդ յերևում է սահմանված շերտավորված ժամկետներից, այդ դեպքում միաժամանակ համապատասխան գումարի պարտավորագրեր պետք է դուրս գրվեն ավելի վաղաժամ ժամկետներով։

Ժամկետների նշված տեղաշարժերը թույլատրվում է, յեթե ժամկետների համապատասխան յերկարացումը կամ կրճատումը 10 որվա սահմաններից ավելի չէ։

## XI. ԻՆՉՊԵՍ ԲԱՇԽԵԼ ԱՌԵՎՏՐԻՑ ՍՏԱՑՎԱԾ ԳՈՒՄԱՐԸ, ՎՈՐԸ ՀԱՆՁՆԵԼ Ե ԱՌԵՎՏՐԱԿԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆԸ ՊԵՏԲԱՆԿԻՆ

28. ԽՍՀՄ ԺԿԽ հաստատած հրահանգի 7-րդ հոդվածին համապատասխան. «Պետական Բանկ մուտք յեղող առևտրական կազմակերպության շրջանառությունից գոյացած գումարները, դուրս գալով առևտրական հավելումը, գրվում են առևտրական կազմակերպության հատուկ փոխատվության հաշվին՝ Բանկին տված ժամկետային պարտավորագրերի մարման համար, ինչպես և սեփական միջոցների մասնակցության դիմաց։

Առևտրական հավելման գումարը գրվում է առևտրական կազմակերպության հաշվարկային հաշվին ամեն օր կամ այն



ժամկետներով, վորոնք կսահմանվեն Բանկի և առևտրական կազմակերպության փոխադարձ համաձայնությամբ»։

Թխած-հացի վաճառքից ստացած գումարը մուտք է արվում հատուկ փոխատվության հաշվին և (հավելման մասով) հաշվարկային հաշվին առևտրից ստացված ամբողջ գումարի հետ միասին։

29. Բանկի բաժանմունքին հանձնված առևտրական կազմակերպության շրջանառությունից գոյացած գումարից (ներառյալ նաև թխված հացի վաճառքից ստացված գումարը), ինչպես և վոչ-կանխիկ մուտքերից, այն գումարը, վորը համապատասխանում է տվյալ առևտրական կազմակերպության պլանով սահմանված առևտրական հավելման միջին տոկոսին (հանած յերկաթուղային տարիֆը, վորը վարկավորվում է Բանկի կողմից), այնուհետև՝ հատուկ վերադիրները (այնտեղ, վորտեղ կան հատուկ վերադիրներ), ինչպես և հարկերի և վերադիրների ուրիշ տեսակները, վորոնք չեն մտցված ապրանքի ֆակտուրային (տուրքի) գնի մեջ՝ մուտք են արվում ամեն օր առևտրական կազմակերպության հաշվարկային հաշվին։

Առևտրական հավելումը հաշվարկային հաշվին մուտք անելու տեխնիկայի պարզեցման համար, Բանկը, առևտրական կազմակերպության համաձայնությամբ, սահմանում է ամեն ամսվա համար, յելնելով շրջանառության պլանային գումարից և վերջին հաշվետու ամսվա հավելման փաստացի տոկոսից, առևտրական հավելումի բացարձակ գումարը, վորը յենթակա յե ամենօրյա գրանցման հաշվարկային հաշվին։

Այդ գումարը մուտք է արվում անմիջապես առևտրից ստացած գումարից հաշվարկային հաշվին, անկախ առևտրական կազմակերպության Բանկի հետ ունեցած հաշվարկների դրությունից։

Ամիսը մեկ անգամ, անցած ամսվա հաշվետու բալանսի հիման վրա, վորը ցույց է տալիս իրացված հավելման փաստացի գումարը, Բանկը ճշտում է առևտրական հավելման գումարը։

Յեթե անցած ամսում իրացված առևտրական հավելման գումարը գերազանցել է այն գումարը, վորը մուտք է արվել հաշվարկային հաշվին անցած ամսում, այդ դեպքում Բանկն անմիջապես տարբերությունը հատուկ փոխատվության հաշվից մուտք է անում առևտրական կազմակերպության հաշվարկային հաշվին։

40625
Гос. Публ. Библ-ка ՀՍԽՀ-ССР А.

Առևտրական հավելման ավելի մուտք արված գումարը դուրս է գրվում հաշվարկային հաշվից հատուկ փոխատվության հաշվին։

## XII. ԻՆՉՊԵՍ ՍՏՈՒԳԵԼ ՀԱՇՎԱՐԿՆԵՐՆ ԱՌԵՎՏՐԱԿԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ՀԵՏ ՀԱՏՈՒԿ ՓՈԽԱՏՎՈՒԹՅԱՆ ՀԱՇՎՈՎ

**30.** ԽՍՀՄ ԺԿԽ հաստատած հրահանգի 8-րդ հոդվածին համապատասխան—«վեց օրը մեկ անգամ Պետական Բանկը կատարում է կազմակերպության հետ հաշվարկ բոլոր այն գործարքների համար, որոնք կատարվել են հատուկ փոխատվության հաշվի միջոցով անցած վեցօրյակի ընթացքում։

Հատուկ փոխատվության հաշվին մուտք չեղած առևտրից ստացված գումարի մի մասը, որը համապատասխանում է ապրանքների վճարման մեջ սեփական միջոցների սահմանված չափին, ընդունվում է նրանց մասնակցության դիմաց։

Առևտրից ստացված գումարի մյուս մասը, որը համապատասխանում է Բանկային վարկի չափին, գնում է Բանկին տրըված այն պարտավորագրերի մարման դիմաց, որոնք անցել են ժամկետներ անցած վեցօրյակում»։

## XIII. ԻՆՉՊԵՍ ՍՏՈՒԳԵԼ ՍԵՓԱԿԱՆ ՄԻՋՈՑՆԵՐԻ ԲԱԺԻՆԱՅԻՆ ՄԱՍՆԱԿՑՈՒԹՅՈՒՆՆ ԱՊՐԱՆՔՆԵՐԻ ՎՃԱՐՄԱՆ ՄԵՋ

**31.** Առևտրից ստացված գումարի այն մասը, որը համապատասխանում է սեփական միջոցների սահմանված չափին ապրանքների վճարման մեջ, համադրվում է առևտրական կազմակերպության ապրանքների վճարման մեջ ունենալիք պարտադիր մասնակցության գումարի հետ անցած վեցօրյակում։ Այդ գումարը ցույց է տրված վճարված փաստաթղթերի ռեեստրի 7-րդ սյունյակում։

Այդ համադրումը վարկային աշխատողը կատարում է սահմանված ձևի հաշվարկային բլանկի վրա (տես՝ հավելված ձև № 8 «Հաշվարկներ ըստ գործարքների հատուկ փոխատվության հաշվի»)։

**32.** Հաշվարկների կարգավորումն առևտրական կազմակերպության հետ, նշված համադրության հիման վրա կատարվում է



այն կարգով, որը նախատեսված է ԽՍՀՄ ԺԿԽ հաստատած հրահանգի 9-րդ հոդվածով, այսինքն՝

«Եթե առևտրից ստացված գումարի այն մասը, որը գնում է սեփական միջոցների մասնակցության դիմաց, ավելի է, քան պահանջվում է՝ ելնելով վեցօրյակում ստացված վճարման պահանջագրերի, հաշվարկային չեկերի ու վճարման հանձնարարությունների գումարից, այդ դեպքում առևտրական կազմակերպության հատուկ փոխատվության հաշվում առաջացած ազատ մնացորդը փոխանցվում է նրա հաշվարկային հաշվին։

Եթե առևտրից ստացված գումարի այն մասը, որը գնում է սեփական միջոցների մասնակցության դիմաց, քիչ է, քան պահանջվում է՝ ելնելով վեցօրյակում հատուցված վճարման պահանջագրերի, հաշվարկային չեկերի ու հանձնարարությունների գումարից, այդ դեպքում Բանկը պակասող գումարը գանձում է առևտրական կազմակերպության հաշվարկային հաշվից կամ, հաշվարկային հաշվում գումարներ չլինելու դեպքում, դնում է ժամկետանցի տակ»։

Եթե այն գումարը, որը պակասում է սեփական միջոցների պարտադիր մասնակցության համար, դրվում է ժամկետանցի տակ, այդ դեպքում մեմորիալ օրդերի պատճեն, որով կատարվում է այդ դուրս գրումը, դրվում է ժամկետանց պարտավորագրերի քարտատեկայի մեջ։

## XIV. ԻՆՉՊԵՍ ՍՏՈՒԳԵԼ ԺԱՄԿԵՏԱՅԻՆ ՊԱՐՏԱՎՈՐԱԳՐԵՐԻ ՎՃԱՐՈՒՄԸ ՀԱՏՈՒԿ ՓՈԽԱՏՎՈՒԹՅԱՆ ՀԱՇՎԻՑ

**33.** Սեփական միջոցների մասնակցության հաշվարկի կարգավորումից հետո, այսինքն նրանից հետո, երբ որոշված է այն գումարը, որը պետք է մուտք արված լինի հատուկ փոխատվության հաշվին կամ դուրս գրված լինի նրանից, վարկային աշխատողը որոշում է պարտքի գումարը և համադրում է այդ ժամկետային պարտավորագրերի քարտատեկայի հետ։ Նախ քան այդ համադրումը ժամկետային պարտավորագրերի քարտատեկայից հանվում են այն պարտավորագրերը, որոնց ժամկետները նախորդ վեցօրյակում անցել են, և մտցվում են նոր ընդունված ժամկետային պարտավորագրերը։

Առևտրական կազմակերպության հետ ըստ նրա Բանկին տված ժամկետային պարտավորագրերի հաշվարկների կարգավորումը կատարվում է այն կարգով, որը նշված է ԽՍՀՄ ԺԿԽ հաստատած հրահանգի 10-րդ կետում, այսինքն՝

«Եթե առևտրից ստացված գումարի այն մասը, որը գնում է ժամկետային պարտավորագրերի վճարման դիմաց, ավելի է այն պարտավորագրերի գումարից, որոնք ունեցել են ժամկետներ անցած վեցօրյակում, այդ դեպքում Բանկը պարտավոր է առևտրական կազմակերպության պահանջի համաձայն, ազատ գումարի չափով հատուցել նրան ուղարկված վճարման պահանջագրերն առանց սեփական միջոցների մասնակցության, համապատասխան կարգով վերաձևակերպելով ժամկետային պարտավորագրերը։

Եթե առևտրից ստացված գումարի այն մասը, որը գնում է ժամկետային պարտավորագրերի վճարման դիմաց, պակաս է այն պարտավորագրերի գումարից, որոնք ունեցել են ժամկետներ անցած վեցօրյակում, այդ դեպքում Բանկը պակասող գումարը գանձում է հաշվարկային հաշվից կամ գնում է ժամկետանցի տակ»,

34. Առևտրից ստացված գումարի ժամկետային պարտավորագրերի վճարումների դիմաց գնացող մասի համադրումն այն պարտավորագրերի գումարի հետ, որոնք անցել են ժամկետներ անցած վեցօրյակում, տեխնիկապես կատարվում՝ հատուկ փոխառության հաշվով յեղած պարտքի գումարը ժամկետային քարտատեկայով յեղած պարտավորագրերի գումարի հետ համադրելու ճանապարհով-

Նշված համադրումը վարկային աշխատողը կատարում է հատուկ փոխառության հաշվի հաշվարկների բլանկի վրա (տես՝ հավելված № 3)։

35. Ժամկետային պարտավորագրերի վերաձևակերպումը ԽՍՀՄ ԺԿԽ հաստատած հրահանգի 10-րդ հոդվածին համապատասխան կատարվում է հետևյալ կերպով.

Առևտրից ստացված ազատ գումարի չափով, որն առաջացել է հատուկ փոխառության հաշվում և հայտնաբերվել է հատուկ փոխառության հաշվով հաշվարկները ստուգելիս, Բանկն անմիջապես, համաձայն առևտրական կազմակերպության պա-



հանջի, հատուցում է ապրանքների համար ստացված վճարման պահանջագրերը, հաշվարկային չեկերը կամ վճարման հանձնարարությունները առանց սեփական միջոցների մասնակցության։

Համապատասխան վճարման փաստաթղթերի վրա Բանկը դնում է կնիք՝ «վճարված է առանց սեփական միջոցների մասնակցության»։

Հետևյալ վեցօրյակի վերջում հատուկ փոխառության հաշվով հաշվարկները կարգավորելիս նշված հաշիվները ցույց են տրվում ռեեստրի 3-րդ սյունյակում։

Դրա հետ միաժամանակ վճարված գումարի չափով Բանկը հանում է մոտակա ժամկետներով պարտավորագրեր, որոնք գտնվում են ժամկետային քարտատեկայում։

## XV. ԻՆՉՊԵՍ ԱՆՑԿԱՑՆԵԼ ԱՅՆ ԳՈՐԾԱՐՔՆԵՐԸ, ՎՈՐՈՆՔ ԿԱՊՎԱԾ ԵՆ ԱՌԵՎՏՐԱԿԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԿՈՂՄԻՑ ՈՒՂԱՐԿՎԱԾ ԱՊՐԱՆՔՆԵՐԻ ՀԱՄԱՐ ԴՈՒՐՍ ԳՐՎԱԾ ՎՃԱՐՄԱՆ ՊԱՀԱՆՋԱԳՐԵՐԻ ԻՆԿԱՍՍՈՅՈՎ

36. Մեծաքանակ առևտրական կազմակերպությունների ապրանքների իրացման մոմենտը հաշվվում է նրանց ճանապարհելը և վճարման պահանջագրերը ինկասսո կատարելու համար Բանկին ներկայացնելը։

Դրա համապատասխան գործարքներն ու ինկասսո հաշվարկներն անցկացվում են հետևյալ կերպով.

ա) առևտրական կազմակերպությանը ճանապարհին գտնվող գումարների դիմաց վարկավորելու համար (ըստ ինկասսո) բացվում է «օնկոլ ըստ ինկասսո» հաշիվ,

բ) ինկասսո ներկայացված վճարման պահանջագրերի գումարով Բանկը պարտագրում է «օնկոլ ըստ ինկասսո» հաշիվը, պահանջագրելով այդ գումարով ապրանքաշրջանառության հատուկ փոխառության հաշիվը,

գ) ինկասսո հանձնված վճարման պահանջագրերի բոլոր վճարումները, որոնք ստացվում են ՄՖԳ-ով, գրվում են «օնկոլ ըստ ինկասսո» հաշվի պահանջին, ի մարումն այդ հաշվով յեղած պարտքի,

դ) «օնկոլ ըստ ինկասսո» հաշվի ապահովումը հանդիսա-

նում են այն վճարման պահանջագրերը, վորոնց վճարման ժամկետը դեռ ևս չի անցել (ինկասսո քարտատեկայի Ա մասը),

յե) «օնկոլ ըստ ինկասսո» հաշվի կարգավորումը կատարվում է ընդհանուր սահմանված կարգով։ Ընդսմին «օնկոլ ըստ ինկասսո» հաշվի կարգավորումը պետք է կատարվի ապրանքաշրջանառության հատուկ փոխատվության հաշվի հետ միաժամանակ։

Յեթե «օնկոլ ըստ ինկասսո» հաշվով պարտքը գերազանցում է ապահովման գումարը (ինկասսո քարտատեկայի Ա մասը), այդ դեպքում Բանկը համապատասխան գումարը հետ է գանձում հաշվարկային հաշվից կամ թե դնում է այդ ժամկետանցի տակ։

Յեթե ապահովման գումարը (ինկասսո քարտատեկայի Ա մասը) ավելի յե «օնկոլ ըստ ինկասսո» հաշվով պարտքի գումարից, այդ դեպքում Բանկն ապահովման գերազանցող գումարը հանդեպ պարտքի փոխանցում է առևտրական կազմակերպության հաշվարկային հաշվին։

զ) Հատուկ փոխատվության հաշվի գործարքները կարգավորվում են սովորական կարգով։

## XVI. ՀԱՏՈՒԿ ՓՈԽԱՏՎՈՒԹՅԱՆ ՀԱՇՎԻ ՌԵԺԻՄԸ ԺԱՄԿԵՏԱՆՑԻ ԴԵՊՔՈՒՄ

37. Առևտրական կազմակերպությունը ժամկետանց ունենալու դեպքում Բանկը սահմանում է հատուկ փոխատվության հաշվի ամենօրյա գործարքների հետևյալ ռեժիմը (կարգը).

ա) հաշվարկային հաշվում յեղած մնացորդը դուրս է գրվում ժամկետանց պարտքի մարման դիմաց,

բ) հատուկ փոխատվության հաշվից վճարման փաստաթղթերի, բացի հացաբուլկային թխվածքների վճարման համար ստացված հաշիվներից ու վճարման պահանջագրերից, հատուցումը դադարեցվում է,

գ) Բանկ մուտք յեղած որվա առևտրից ստացված գումարը (դուրս յեկած առևտրական հավելումը ու հատուկ վերադիրը) մուտք է արվում հատուկ փոխատվության հաշվին,

դ) Բանկին տված պարտավորագրերը հանվում են ժամկետային քարտատեկայից հենց նույն որը, վոր որը նրանց ժամ-



կետներն են, և հատուկ փոխատվության հաշվով պարտքը համադրվում է Բանկին արված պարտավորագրերի ժամկետային քարտատեկայի հետ,

յե) ժամկետային պարտավորագրերի գերազանցող գումարը հանդեպ հատուկ փոխատվության հաշվով յեղած պարտքի փոխանցվում է հատուկ փոխատվության հաշվից ժամկետանց պարտքի հանգեցման համար։

38. Ժամկետանց պարտքի մարումից հետո Բանկն անմիջապես վերսկսում է վճարման պահանջագրերի, հաշվարկային չեկերի ու վճարման հանձնարարությունների հատուցումը հատուկ փոխատվության հաշվից։

39. Ժամկետանց պարտքի մարումից հետո Բանկը հատուկ փոխատվության հաշվով հաշվարկների ստուգման մոտակա հերթական որը այդ ստուգումը կատարում է ժամկետանցի առաջացման որվանից սկսած ամբողջ ժամանակաշրջանի համար։

## XVII. ԻՆՉՊԵՍ ՎԱՐԿԱՎՈՐԵԼ ԱՌԵՎՏՐԱԿԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆԸ ՆՐԱ ԿՈՂՄԻՑ ԱՌԵՎՏՐԱԿԱՆ ՊԼԱՆԸ ԳԵՐԱԿԱՏԱՐԵԼՈՒ ԴԵՊՔՈՒՄ

40. ԽՍՀՄ ԺԿԽ հաստատած հրահանգի 11-րդ հոդվածին համապատասխան. «այն դեպքում, յերբ գերակատարվում է ապրանքաշրջանառության համապատասխան ամսվա պլանը, վորը սահմանված է առևտրական կազմակերպության համար յեռամսյակային պլանի սահմաններում, Պետական Բանկը լրիվ վարկավորում է ապրանքների լրացուցիչ գնումները, վորոնք անհրաժեշտ են պլանից ավելի կատարված համապատասխան շրջանառության համար՝ չպահանջելով առևտրական կազմակերպությունից սեփական միջոցների մասնակցության վճարման մեջ։

Պլանից ավելի կատարված շրջանառությունը վարկավորվում է հետևյալ կարգով. այն դեպքում, յերբ առևտրական կազմակերպությունն ընթացիկ ամսում գերակատարում է ապրանքների վաճառքի սահմանված պլանը, Բանկը հետևյալ ամսում, վարկավորելով ապրանքների պլանային գնումներն առևտրական կազմակերպության սեփական միջոցների մասնակցության պայմաններով, միաժամանակ վարկավորում է առանց սեփական մի-

ջոցների մասնակցության պլանից ավելի կատարվող ապրանքների գնումները (նախորդ ամսում պլանից ավելի կատարված վաճառքի սահմաններում)։

*Ծանոթություն*.—Եռամսյակային առևտրական պլանի բաշխումն ըստ ամիսների ամեն մի առևտրական կազմակերպության համար կատարում է նրա վերադաս օղակը»։

Վճարման պահանջագրերը հաշվարկային չեկերն ու վճարման հանձնարարությունները առանց սեփական միջոցների մասնակցության հատուցելիս Բանկը վճարված փաստաթղթերի վրա դնում է կնիք՝ «վճարված է առանց սեփական միջոցների մասնակցության»։

41. Բանկը կարող է արտոնյալ վարկի (այսինքն՝ առանց սեփական միջոցների մասնակցության վարկի) գումարը բաշխել մի քանի մասերի՝ տալով այդ վեցօրյակներով կամ հետևյալ ամսի յերկու վեցօրյակներում հավասար մասերով։

*Ծանոթություն*. — Յեթե առևտրական կազմակերպությունը չունի վերադաս օղակի կողմից հաստատված գնումների ամսական պլան, այդ դեպքում, վորպես գնումների պլան ընդունվում է վերադաս օղակի կողմից հաստատված վաճառքի ամսական պլանը դուրս յեկած հավելման համապատասխան նորման (տոկոսը)։

## XVIII. ԱՐՏԱՊԼԱՆԱՅԻՆ ՓՈԽԱՏՎՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ, ՎՈՐՈՆՔ ՏՐՎՈՒՄ ԵՆ ԱՊՐԱՆՔՆԵՐԻ ՆԵՐՄՈՒԾՄԱՆ ՈՒ ՎԱՃԱՌՔԻ ԱՆՀԱՄԱՉԱՓՈՒԹՅՈՒՆԻՑ ԱՌԱՋԱՑԱԾ ԺԱՄԱՆԱԿԱՎՈՐ ԴԺՎԱՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԴԵՊՔՈՒՄ

42. ԽՍՀՄ ԺԿԽ հաստատած հրահանգի 19-րդ և 20-րդ հոդվածները նախատեսում են Բանկի կողմից հատուկ օգնություն արտապլանային փոխատվությունների ձևով այն դեպքում, յերբ առևտրական կազմակերպությունն ապրանքների ներմուծման և վաճառքի անհամաչափության հետևանքով ունենում է ժամանակավոր դժվարություններ, այսինքն՝

ԽՍՀՄ ԺԿԽ հաստատած հրահանգի 19-րդ հոդվածն ասում է. «Յեթե շահավետ աշխատող կազմակերպությունն ունեցել է ժամանակավոր դժվարություններ ապրանքների անհամաչափ ներմուծման (գալով) կամ վաճառքի անհամաչափ ընթացքի հետևանքով, Պետական Բանկի բաժանմունքի կառավարիչը տրամադրում է նրան արտապլանային փոխատվություն 10—15 օր ժամկետով»։



Արտապլանային փոխատվությունների գումարը կարող է վորպես սեփական միջոցների մասնակցություն անմիջապես մուտք գրվել հատուկ փոխատվության հաշվին, ընդվորում Բանկը միաժամանակ տալիս է համապատասխան վարկ հատուկ փոխատվության հաշվից. այդ գումարը նույնպես կարող է օգտագործվել Բանկի ժամկետանց պարտքի մարման համար, վորպիսի դեպքում չի տրվում լրացուցիչ վարկ (բացի արտապլանային փոխատվություններից)։

ԽՍՀՄ ԺԿԽ հաստատած հրահանգի 20-րդ հոդվածն ասում է. «Պետական Բանկի վարչությունը սահմանում է իր հանրապետական, յերկրային ու մարզային գրասենյակների համար, իսկ վերջինները՝ իրենց բաժանմունքների համար արտապլանային փոխատվությունների լիմիտներ»։

43. Տալով արտապլանային փոխատվություն, բաժանմունքի կառավարիչը պետք է մանրամասնորեն պարզի առևտրական կազմակերպության սեփական միջոցների ժամանակավոր պակասության պատճառները։

Յեթե շահավետ աշխատող առևտրական կազմակերպության սեփական միջոցների հետ դժվարությունները առաջացել են առևտրի ընթացքի ժամանակավոր—պատահական տատանումների հետևանքով, այդ դեպքում շրջանային բաժանմունքի կառավարիչը տրամադրում է առևտրական կազմակերպությանն արտապլանային փոխատվություն, վորոշելով նրա չափը նայած կոնկրետ այն պայմաններին, վորոնք առաջացել են առևտրական կազմակերպության մեջ, և արտապլանային փոխատվությունների լիմիտներին, վորոնք տրվել են նրան մարզային գրասենյակի կողմից։

Իսկ յեթե բաժանմունքի կառավարիչը վորոշում է, վոր առևտրական կազմակերպության սեփական միջոցների հետ դժվարությունները առաջացել են միջոցների նվազեցման, իմոբիլիզացիայի կամ ապրանքների կուտակման կապակցությամբ, վորն առաջացել է առևտրական կազմակերպության կողմից ապրանք-

ների գնելիս թույլ տված վատ աշխատանքների հետևանքով, բաժանմունքի կառավարիչը մերժում է տալ առևտրական կազմակերպությանն արտապլանային փոխատվություններ:

Ծանոթություն.—Արտապլանային փոխատվությունը կարող է տրվել նաև ժամկետանց պարտք լինելու դեպքում, բայց վորում այդպիսի դեպքերում արտապլանային փոխատվության գումարը ոգտագործվում է ժամկետանց պարտքի մարման համար:

44. Ապրանքների կուտակումների հետ կապված դժվարությունների դեպքում Բանկի բաժանմունքի կառավարիչը կարող է դնել առևտրական կազմակերպության առաջ վորոշ պայմաններ նրան արտապլանային փոխատվություն տալու համար: Այդ պայմանները կարող են կայանալ նրանում, վորպեսզի արտապլանային փոխատվությունը չոգտագործվի այն ապրանքների գնումների համար, վորոնք արդեն կուտակվել են առևտրական կազմակերպության մոտ:

45. Բանկի բաժանմունքի կառավարիչը կարող է տրամադրել առևտրական կազմակերպությանն արտապլանային փոխատվություն նաև նրա հաշվարկային հաշվում սեփական միջոցների մնացորդ լինելու դեպքում, այն էլ այն ժամանակ, յերբ սեփական միջոցների այդ մնացորդը հանդիսանում է վորպես սեփական միջոցների մի կուտակում, վորը հատկացված է աշխատավարձի, շենքի վարձի, հարկերի հերթական վճարման համար:

## XIX. ԻՆՉՊԵՍ ՍԱՀՄԱՆԵԼ ՓՈԽԱՏՎՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԺԱՄԿԵՏՆԵՐԸ, ՎՈՐՈՆՔ ՇԵՐՏԱՎՈՐՎԱԾ ԵՆ ԸՍՏ ԱՊՐԱՆՔԱՅԻՆ ԽՄԲԵՐԻ

46. ԽՍՀՄ ԺԿԽ հաստատած հրահանգի 12-րդ հոդվածին համապատասխան. «Պետական Բանկի բաժանմունքը սահմանում է առևտրական կազմակերպությունների համար, վորոնք անց են կացված վարկավորման՝ համաձայն ԽՍՀ Միության ԺԿԽ 1936 թվի հունիսի 4-ի վորոշման, վարկավորվում են շերտավորված ժամկետներով հետևյալ կարգով.

ա) Պետական Բանկի հանրապետական, յերկրային կամ մարզային գրասենյակը հայտնում է իր բաժանմունքներին տարբեր ապրանքային խմբերի ժամկետները, վորոնք սահմանվում են



համապատասխան առևտրական կազմակերպությունների համար այն կարգով, վորը նախատեսված է ԱՊԽ հուլիսի 11-ի № 284 վորոշումով՝ «Առևտրական կազմակերպությունների վարկավորման շերտավորված ժամկետների մասին»:

բ) Պետական Բանկի բաժանմունքը վորոշում է վարկավորման ժամկետները տարբեր ապրանքների վճարման համար՝ համաձայն այդ ապրանքների շրջանառության արագության այն ժամկետների, վորոնք սահմանված են տվյալ առևտրական կազմակերպությունների համար, հանելով 7 որ այլքաղաքային շրջանառության դեպքում և 4 որ՝ ներքաղաքային շրջանառության դեպքում:

Հացամթերքների, նավթամթերքների և ողու համար փոխատվությունները տրվում են «այդ ապրանքների շրջանառության արագության ամբողջ ժամկետով»:

47. Ապրանքների բաշխումն ըստ առանձին խմբերի ցույց է տրված ԱՊԽ 1936 թվ. հուլիսի 11-ի № 284 վորոշման հավելվածի մեջ:

48. Ռեեստրների ստուգումը տեխնիկապես թեթևացնելու համար Բանկի շրջանային բաժանմունքը ամեն մի առևտրական կազմակերպության համար կազմում է փոխատվությունների ժամկետների տախտակ, վորոնք տրված են ըստ առանձին ապրանքային խմբերի՝ առանձին այլքաղաքային շրջանառության համար և առանձին ներքաղաքային շրջանառության համար, ինչպես և հացամթերքների, նավթամթերքների և ողու համար:

Ժամկետների տախտակը հաստատվում է Բանկի վարկային աշխատողի և առևտրական կազմակերպության գլխավոր հաշվապահի միատեղ ստորագրություններով:

Այդ տախտակի մեջ նշված ժամկետներին համապատասխան առևտրական կազմակերպությունը կազմում է վճարված փաստաթղթերի ռեեստրը:

Այդ տախտակին համապատասխան Բանկի բաժանմունքի վարկային աշխատողը առևտրական կազմակերպությունից վերցնում է ժամկետային պարտավորագրեր:

## XX. ՎԵՐԱՀՍԿՈՂՈՒԹՅՈՒՆԸ ՅԵՎ ՍԱՆԿՑԻԱՆԵՐԸ

49. ԽՍՀՄ ԺԿԽ հաստատած հրահանգի 13-րդ հոդվածին համապատասխան. «Պետական Բանկը պարտավոր է պարբերաբար հետևել առևտրական կազմակերպության կողմից վարկավորման այն պայմանների կատարմանը, վորոնք սահմանված են ԽՍՀ Միության ԺԿԽ 1936 թվ. հունիսի 4-ի վորոշումով, այսինքն՝

ա) աշխատանքի շահավետության նկատմամբ,

բ) սեփական միջոցների մասնակցության նկատմամբ,

գ) Բանկին տրված ժամկետային պարտավորագրերի վճարումների ճշտապահության նկատմամբ»:

### Վերահսկողությունն առևտրական կազմակերպության շահավետության նկատմամբ

50. Բանկի բաժանմունքը վերահսկողության է յենթարկում առևտրական կազմակերպության առևտրական գործունեության հետևանքները յեռամսյակային բալանսներով, այսինքն՝

ԽՍՀՄ ԺԿԽ հաստատած հրահանգի 14-րդ հոդվածին համապատասխան. «յուրաքանչյուր յեռամսյակի, հաշվետու յեռամսյակի սկզբի և վերջին բալանսներով, Պետական Բանկը ստուգում է առևտրական կազմակերպության գործունեության հետևանքներն ամբողջ յեռամսյակում:

Յեթե առևտրական կազմակերպությունը վերջին յեռամսյակում տվել է վնաս, այդ դեպքում Բանկը դադարեցնում է նրան փոխատվություններ տալը:

Այդ դեպքում վարկավորումը վերսկսվում է հետևյալ յեռամսյակային շահավետ բալանսի ներկայացնելուց հետո:

Պետական Բանկի հանրապետական, յերկրային կամ մարզային գրասենյակի կառավարիչը կարող է թույլատրել վարկավորման վերսկսումը նաև մինչև հետևյալ յեռամսյակային շահավետ բալանսի ներկայացնելը, յեթե վերադաս առևտրական կազմակերպությունը (յերկրային կամ մարզային Պետառի կենտրոնը կամ սպառողական կոոպերացիայի միությունը) տա անհրա-



ժեշտ յերաշխավորություն՝ վնասաբերության պատճառների վերացման և բանկային վարկի ապահովման մասին»:

Վնասաբեր առևտրական կազմակերպության վարկավորումը դադարեցնելու մասին Բանկի բաժանմունքը բոլոր դեպքերում հայտնում է իր մարզային գրասենյակին, բայց վորում վարկավորումը վերսկսելու համար պահանջվում է մարզային գրասենյակի կառավարչի թույլտվությունը:

### Վերահսկողությունը սեփական միջոցների մասնակցության նկատմամբ յեվ բանկային վարկի ապահովման ստուգումը

51. Ապրանքների վճարման մեջ սեփական միջոցների մասնակցության պահպանման նկատմամբ վերահսկողությունն իրականացվում է հենց հատուկ փոխատվության հաշվով կատարվող գործարքների ռեժիմով:

Հատուկ փոխատվության հաշվի կարգավորման զուգընթաց Բանկի բաժանմունքի վարկային աշխատողը պարտավոր է սիստեմատիկորեն ու ճշտորեն իրականացնել Բանկային վարկերի ապահովման ստուգումն առևտրական կազմակերպության ամսական բալանսներով:

52. ԽՍՀՄ ԺԿԽ հաստատած հրահանգի 15-րդ հոդվածը նախատեսում է. «յեթե առևտրական կազմակերպությունը խախտում է ապրանքների վճարման մեջ սեփական միջոցների մասնակցության կանոնը, այդպիսի դեպքում Պետական Բանկն իրավունք ունի նրան անցկացնել ամենօրյա մասնակցության ապրանքների վճարման մեջ (մեկ ամիս ժամկետից վոչ ավելի)»:

Այդ դեպքում Բանկը հատուցում է առևտրական կազմակերպության վճարման փաստաթղթերը միմիայն նրա սեփական միջոցների մասնակցության չափով, վորոնք մուտք են լինում այդ օրը առևտրից կամ թե համապատասխան լրացուցիչ փոխանցումներից հաշվարկային հաշվից, յեթե առևտրական կազմակերպությունն այդպիսի փոխանցումները կկատարի:

Յեթե մեկ ամսվա ընթացքում առևտրական կազմակերպությունը կարգավորել է իր դրությունը, Բանկի բաժանմունքի

կառավարիչը պարտավոր է անցկացնել նրան վարկավորման նորմալ ռեժիմի:

Իսկ եթե տնտեսական կազմակերպությունն իր դրությունը չի կարգավորել, Բանկի բաժանմունքի կառավարիչը պարտավոր է պարզել, թե որտեղ է տնտեսական կազմակերպությունը ներդրել իր սեփական շրջանառու միջոցները, և դնել մարզային գրասենյակի առաջ խնդիր այդ տնտեսական կազմակերպության հետագա վարկավորման հնարավորության մասին:

### Վերահսկողությունը Բանկին տված ժամկետային պարտավորագրերի վճարումների ճշտապահության նկատմամբ

53. ԽՍՀՄ ԺԿԽ հաստատած հրահանգի 16-րդ հոդվածը նախատեսում է. «Այն դեպքերում, երբ տնտեսական կազմակերպությունն իր ժամկետային պարտավորագրերը չի վճարել նշանակված ժամկետին, Բանկը պարտավոր է ժամկետանց պարտավորագրերի գումարն անցկացնել ժամկետանց փոխատվությունների հաշվին և գանձել այդ գումարը բոլոր առաջիկա մուտքերից, կասեցնելով վճարման պարտավորագրերի, հաշվարկային չեկերի ու վճարման հանձնարարությունների հատուցումները հատուկ փոխատվության հաշվից»:

Տնտեսական կազմակերպությունը ժամկետանց փոխատվություն ունենալու դեպքում Բանկն իրավունք չունի տալ նրան նոր փոխատվություններ (բացի արտապլանային փոխատվություններից, որոնք տրվում են ժամկետանց պարտքի մարման համար ի դիմաց սեփական միջոցների մասնակցության)—մինչև ժամկետանց պարտավորագրերի լրիվ մարումը:

Ժամկետանց պարտքի առկայության դեպքում հատուկ փոխատվության հաշվով կատարվող գործարքների ռեժիմը ցույց է տված 37—39 կետերում:

### Ինչ կարգով տնտեսական կազմակերպությունը կարող է հանվել վարկավորումից

54. ԽՍՀՄ ԺԿԽ հաստատած հրահանգի 17-րդ հոդվածը նախատեսում է. «Պետական Բանկի հանրապետական, երկրա-



յին կամ մարզային գրասենյակի կառավարիչը կարող է վարկավորումից հանել.

ա) հանրապետական և տեղական նշանակություն ունեցող կազմակերպություններին՝ համապատասխան հանրապետական, երկրային կամ մարզային տնտեսական կենտրոնների այդ մասին հայտնելուց 5 օր հետո,

բ) միութենական նշանակություն ունեցող տնտեսական կազմակերպություններին՝ միմիայն Պետական Բանկի վարչության թույլտվությամբ»:

## XXI. ՎԵՐԱՀՍԿՈՂՈՒԹՅՈՒՆՆ ԱՌԵՎՏՐԻՑ ՍՏԱՑՎԱԾ ԳՈՒՄԱՐԸ ԲԱՆԿԻՆ ՀԱՆՁՆԵԼՈՒ ՆԿԱՏՄԱՄԲ

55. Հատուկ փոխատվության հաշվով առանց լիմիտի վարկավորելու դեպքում հատուկ նշանակություն է ստանում վերահսկողությունն առևտրից ստացված գումարները բանկին հանձնելու նկատմամբ:

Ահա թե ինչու ԽՍՀՄ ԺԿԽ հաստատած հրահանգի 18-րդ հոդվածը նախատեսում է, որ «Պետական Բանկի բաժանմունքները պարտավոր են սիստեմատիկորեն հետևել, որպեսզի առևտրական կազմակերպությունները ժամանակին և լրիվ կերպով հանձնեն Բանկին առևտրից ստացված գումարները՝ համաձայն ԱԳԽ 1932 թվ. հուլիսի 17-ի № 836 որոշման, հաշվի առնելով մանր-մեծաքանակ գնումների համար անհրաժեշտ գումարների ծախսման նորմաները, որոնք սահմանված են ԽՍՀ Միության ԺԿԽ 5-ի որոշման 13-րդ հոդվածով»:

Այն պարտավորագրի մեջ, որը տրվում է Բանկին հատուկ փոխատվության հաշիվը բացելիս, տնտեսական կազմակերպությունը պարտավորվում է մուծել Պետբանկ առևտրից ստացված ամբողջ գումարը, բացառությամբ այն մասի, որը նախատեսված է օրենքով:

Բանկի բաժանմունքները պետք է սիստեմատիկորեն ստուգեն տնտեսական կազմակերպությունների կողմից առևտրից ստացված գումարների հանձնումը, կատարելով Բանկին հանձնված գումարի ընտրովի համեմատություն այն փաստացի գու-

*մարի հետ, վորն առևտրական կազմակերպությունը ստացել է առևտրից համապատասխան որում։*

*Առևտրից ստացված գումարը Բանկին հանձնելու կանոնների խախտման դեպքում, Բանկի բաժանմունքը իրավունք ունի առևտրական կազմակերպության հաշվին նշանակել նրա մոտ ինկասսատորներ առևտրից ստացված գումարները հավաքելու համար։*

## XXII. ԱՌԵՎՏՐԻ ՎԱՐԿԱՎՈՐՄԱՆ ԼԻՄԻՏՆԵՐԻ ՄԱՍԻՆ

*56. ԽՍՀՄ ԺԿԽ 1936 թվ. հունիսի 4-ի վորոշման և ԽՍՀՄ ԺԿԽ հաստատած հրահանգի 21-րդ հոդվածին համապատասխան.*

*«Ամեն մի առանձին առևտրական կազմակերպության համար վարկավորման կայուն լիմիտներ սահմանելու գոյություն ունեցած կարգը վերացվում է։*

*Առևտրական կազմակերպությունների վարկավորման ընդհանուր չափը սահմանվում է Աշխ. ու Պաշտ. Խորհրդի կողմից՝ յեռամսյակներով ամբողջ Պետական Բանկի համար։ Պետական Բանկի վարչությունն առևտրական կազմակերպությունների վարկավորման չափերը սահմանում է ըստ իր հանրապետական, յերկրային ու մարզային գրասենյակների, իսկ վերջիններն՝ ըստ իրենց բաժանմունքների։*

*Պետական Բանկի բաժանմունքն առևտրական կազմակերպությունների համար լրացուցիչ վարկի պահանջ ունենալու դեպքում՝ վարկի ավելացման խնդիրը լուծում է Պետական Բանկի համապատասխան գրասենյակը, իսկ հանրապետության, յերկրի կամ մարզի բոլոր առևտրական կազմակերպությունների համար ամբողջովին վերցրած վարկի լրացուցիչ պահանջ ունենալու դեպքում՝ վարկի ավելացման խնդիրը լուծում է Պետական Բանկի վարչությունը»։*

*57. Մարզային գրասենյակի կողմից հաստատած լիմիտների բացակայությունը չի կարող ծառայել հիմք մերժելու առևտրական կազմակերպությանը վարկ տալ։*

*Լիմիտները չբավարարելու դեպքում Բանկի բաժանմունքի կառավարիչը պարտավոր է յուրաժամանակ խնդրել մարզային*



*գրասենյակից լիմիտի ավելացում, հիմնավորելով այդ պահանջը համապատասխան տվյալներով առևտրի ընթացքի մասին։*

*Բանկի բաժանմունքները պարտավոր են կազմել իրենց վարկային ռեսուրսների պահանջի պլաններն առևտրական շրջանառությունների պլանների հիման վրա և յուրաժամանակ հայտնել գրասենյակներին անհրաժեշտ լիմիտների մասին պլանները գերակատարելու դեպքում։*

## XXIII. ԻՆՉՊԵՍ ՎԱՐԿԱՎՈՐԵԼ ԱՅՆ ԱՌԵՎՏՐԱԿԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ, ՎՈՐՈՆՔ ՉԵՆ ԱՆՑԿԱՑՎԵԼ ՆՈՐ ԿԱՐԳԻՆ

*58. ԽՍՀՄ ԺԿԽ հաստատած հրահանգի 24-րդ հոդվածին համապատասխան. «այն առևտրական կազմակերպությունների համար, վորոնք չեն անցկացված վարկավորման նոր կարգին՝ համաձայն ԽՍՀ Միության ԺԿԽ 1936 թվ. հունիսի 4-ի վորոշման, ամբողջովին պահպանվում է վարկավորման այն կարգը, վորը սահմանված է ԽՍՀ Միության ԺԿԽ 1933 թվ. օգոստոսի 16-ի վորոշումով՝ «Առևտրական կազմակերպություններին ըստ ապրանքաշրջանառության վարկավորման կարգի մասին»։*

*Այդպիսի կազմակերպություններին Բանկը վարկավորում է հաստատուն լիմիտների սահմաններում հաշվի առնելով սեփական միջոցների սահմանված նորմատիվը և միջին ժամկետով։*

*59. Բոլոր վերև նշվածներն այն կազմակերպությունների նկատմամբ, վորոնք չեն անցկացվել վարկավորման նոր կարգին, չեն վերաբերում գյուղկոոպներին ու գյուղխանութներին, վորոնք մինչև կառավարության հատուկ վորոշումը Բանկի կողմից պետք է վարկավորվեն նախկին պայմաններով համաձայն № 62 հրահանգի։*

## XXIV. ԻՆՉՊԵՍ ՎԱՐԿԱՎՈՐԵԼ ԱՅՆ ԱՌԵՎՏՐԱԿԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ, ՎՈՐՈՆՔ ԱՇԽԱՏՈՒՄ ԵՆ ԼԱՎ ՅԵՎ ՈՒՆԵՆ ՍԵՓԱԿԱՆ ՄԻՋՈՑՆԵՐԻ ԲԱՐՁՐ ՏԵՍԱԿԱՐԱՐ ԿՇԻՌ ԱՊՐԱՆՔՆԵՐԻ ՎՃԱՐՄԱՆ ՄԵՋ

*60. Այն առևտրական կազմակերպությունների նկատմամբ, վորոնք աշխատում են լավ ու շահավետ և ունեն սեփական մի-*

ջոցներ ապրանքների մեջ 40—50%-ից վոչ պակաս, սահմանվում է վարկավորման հեշտացված ռեժիմ, այսինքն՝

ա) հատուկ փոխատվության հաշվի կարգավորումը կարող է կատարվել ամեն վեցօրյակի փոխարեն 10—15 օրը մեկ անգամ։

բ) Վճարված հաշիվների ցուցակագրումները նրանց խմբավորումով ըստ ժամկետների, վորոնք հանդիսանում են ռեեստրի հավելվածը, կարող են չներկայացվեն բանկին։

61. Այն կազմակերպությունների ցուցակը, վորոնց համար սահմանվում է վարկավորման նշված հեշտացված ռեժիմը, հաստատվում է Պետական Բանկի վարչության կողմից։

Այն առևտրական կազմակերպությունների նկատմամբ, վորոնք անցկացված վարկավորման նոր կարգին՝ համաձայն 1936 թվ. հունիսի 4-ի օրենքի և ներկա հրահանգի, դադարում են իրենց գործողությունը Պետական Բանկի վարչության ներքոհիշյալ հրահանգները, շրջաբերականներն ու ցուցմունքները. 1985, 2296, 2333, 2420 2439, 2519, 2704, 2721, 2893, 2913, 3029, 3041, 3080, 3107, (4007), 3128, 3172, հեռ. 161, 825 կ, 3327, 2749, 2781, 2900, 2963, 2732, 2815.

ԽՍՀՄ Պետական Բանկի վարչության
նախագահ՝ Ս. ԿՐՈՒԳԼԻԿՈՎ



Ձև № 1

Պետական բանկի ........................ — գրասենյակին / բաժանմունքին

Քաղաք ........................

Ումից ........................

Հասցեն ........................

## ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ—ՊԱՐՏԱՎՈՐԱԳԻՐ

ԽՍՀՄ ԺԿԽ 1936 թվ. հունիսի 4-ի վորոշման հիման վրա Պետական Բանկում առևտուրը վարկավորելու հրահանգին համապատասխան, խնդրում ենք՝

1. Բացել մեզ համար հատուկ փոխատվության հաշիվ։

2. Հատուցել այդ հաշվից ակցեպտի չենթարկված վճարման պահանջագրերը, մեր կողմից տված վճարման հանձնարարությունները ու հաշվարկային չեկերը։

3. Ապրանքների վաճառքից ստացված գումարը (նրանից հանած առևտրական հավելումներն ու հատուկ վերադիրները) մուտք գրել անմիջապես հատուկ փոխատվության հաշվին՝ օգտագործելով այդ գումարի համապատասխան մասն ապրանքների վճարման մեջ մեր մասնակցության դիմաց և մնացած մասը, ժամկետային պարտավորագրերի մարման համար։

Պարտավորվում ենք.

1. Բանկի կողմից սահմանված օրերում ներկայացնել բանկին անցած վեցօրյակում հատուկ փոխատվության հաշվից հատուցված փաստաթղթերի ռեեստրը, նրանց բաշխելով վարկերի այն ժամկետներով, վորոնք սահմանված են մեզ համար ըստ առանձին ապրանքների ու հաշվի առնելով վճարումի ժամկետը, և ժամկետային պարտավորագրերն անցած ժամանակաշրջանում հատուկ փոխատվության հաշվով մեզ տված վարկի գումարով։

2. Ապրանքների վաճառքից ստացված գումարը լրիվ հանձնել Բանկին, բացառությամբ այն մասի, վորը մնում է մեզ Բանկի համաձայնությամբ ու օրենքով թույլատրված սահմաններում ընթացիկ ծախսերի և մանր ինքնագնումների համար։

Պետական Բանկին իրավունք ենք տալիս ինքնուրույն կերպով դուրս գրել մեր հաշվարկային հաշվից՝ հատուկ փոխատվության հաշվով յեղած պարտքի գերազանցման գումարը հանդերձ ժամկետային պարտավորագրերի գումարի, սեփական միջոցների պարտադիր մասնակցության համար պակասող գումարները, ինչպես և ժամկետանցի վրա գրված գումարները։

Ի ապահովումն հատուկ փոխատվության հաշվով մեր ունեցած պարտքի տալիս ենք վորպես գրավական շրջանառության մեջ յեղած մեր ապրանքները, համաձայն կցված գրավային պարտավորագրի։

Կ. Տ. (Առևտրական կազմակերպության—ստորագրությունները)

(Ստեղծական կազմակերպության անունը)

(մասնակցությունը ............ տոկոս)

# Ռ Ե Ե Ս Տ Ր №............

Հատուկ փոխատվության №................. հաշվով ապրանքների համար կատարված վճարումների .................. ից մինչև ......36 թվ.

| I. Վճարումների ընդհանուր գումարները | Գումարը |
|---|---|
| 1. Ընդամենը վճարված է . . . . . . . | 20.000 |
| Այդ թվում՝ | |
| 2. Վճարված է ամբողջովին սեփական միջոց. հ-ին . . | 3.000 |
| 3. » » բանկ. փոխատվ. հ-ին . . | 2.000 |
| 4. » սեփական միջոց. մասնակց. պայմանով . . | 15.000 |

II. Բանկային փոխատվության բաշխումն ըստ հանգցման ժամկետների.

| Վարկի ժամկետները | Վճարումներ սեփական միջոցների մասնակցությամբ: Ընդամենը վճարված է | Մասնակց. չափը 20 տոկոս. | Փոխատվ. գումարը | Վճարումներ առանց սեփ. միջոց. մասնակցության | Ընդամենը ստացված է փոխատվություն | Բանկային վարկի մարման ժամկետները |
|---|---|---|---|---|---|---|
| 5 | 6 | 7 | 8 | 9 | 10 | 11 |
| 12 օր . . . | 2.400 | 480 | 1.920 | 200 | 2.120 | 15 օգոս. 1936 թ. |
| 24 օր . . . | 3.000 | 600 | 2.400 | 1.100 | 3.500 | 27 » » |
| 35 օր . . . | 7.000 | 1.400 | 5.600 | 500 | 6.100 | 7 սեպտ. » |
| 60 օր . . . | 2.600 | 520 | 2.080 | 200 | 2.280 | 3 հոկտ. » |
| Ընդամենը | 15.000 | 3.000 | 12.000 | 2.000 | 14.000 | |

ՀԱՎԵԼՎԱԾ՝

1. Տեղեկանք սեփական միջոցների հաշվին կատարված վճարումների մասին։

2. Ցուցակ այն փաստաթղթերի, վորոնք վճարված են լրիվ բանկային վարկի հաշվին։

3. Ցուցակ այն փաստաթղթերի, վորոնք վճարված են սեփական միջոցների մասնակցության պայմանով։

Վճարված փաստաթղթերի գումարը և նրանց ըստ վարկի ժամկետների խմբավորման ճշտությունը հաստատում ենք՝

ԴԻՐԵԿՏՈՐ՝

ԳԼԽ. ՀԱՇՎԱՊԱՀ՝





(Ստեղծական կազմակերպության անունը)

(Կցված է № ............ ռեեստրին)

# Տ Ե Ղ Ե Կ Ա Ն Ք

Սեփական միջոցների հաշվին կատարված վճարումների մասին

| ՆN ըստ կարգի | Ապրանքների անունը | Գումարը |
|---|---|---|
| 1 | Հայցարուլկային թխվածքներ . . . | |
| 2 | | |
| 3 | | |
| | Ընդամենը . . . . | |

Սույն տեղեկանքը հաստատում ենք՝

ԴԻՐԵԿՏՈՐ՝

ԳԼԽ. ՀԱՇՎԱՊԱՀ՝

Ձև № 2-բ

................................................................................

(Առևտրական կազմակերպության անունը)

Կցվում է № .................. ռեեստրին

# ՑՈՒՑԱԿ

այն փաստաթղթերի, որոնք մտցված են № .......... ռեեստրի մեջ և վճարված են սեփական միջոցների մասնակցության պայմանով

| №№ ըստ կարգի | Վճարման ամսաթիվը | Վճարված փաստաթղթերի անունները (տեղավորվում են ըստ խմբերի աճող ժամկետների կարգով, իսկ խմբերի ներսում վճարման ամսաթվերով) | Հաշիվ ֆակտուր. №№-ը | Գումարը |
|---|---|---|---|---|
| 1 | 2 | 3 | 4 | 5 |
| 1 | | ........................ | | |
| 2 | | ........................ | | |
| 3 | | ........................ | | |
| | | և այլն | | |
| | | Ընդամենը վարկի ժամկետով «..........» որ | | |
| | | ........................ | | |
| | | ........................ | | |
| | | և այլն | | |
| | | Ընդամենը վարկի ժամկետով «..........» որ | | |
| | | ........................ | | |
| | | ........................ | | |
| | | և այլն | | |
| | | Ընդամենը վարկի ժամկետով «..........» որ | | |
| | | ........................ | | |
| | | ........................ | | |
| | | և այլն | | |
| | | Ընդամենը վարկի ժամկետով «..........» որ | | |
| | | Բոլորը . . . . . . . | | |

Վճարված փաստաթղթերի գումարը և նրանց ըստ վարկի ժամկետների խմբավորման ճշտությունը հաստատում ենք՝

ԴԻՐԵԿՏՈՐ՝

ԳԼԽ. ՀԱՇՎԱՊԱՀ՝



Ձև № 2-գ

________________________________________________

(Առևտրական կազմակերպության անունը)

Կցվում է № .................. ռեեստրին

# ՑՈՒՑԱԿ

այն փաստաթղթերի, որոնք մտցված են № ________ ռեեստրի մեջ և վճարված են լրիվ բանկային վարկի հաշվին

| №№ ըստ կարգի | Վճարման թիվը | Վճարման փաստաթղթերի անունները (տեղավորվում են ըստ խմբերի աճող ժամկետների կարգով, իսկ խմբերի ներսում վճարման ամսաթվերով) | Հաշիվ ֆակտ. №№-ը | Գումարը |
|---|---|---|---|---|
| 1 | 2 | 3 | 4 | 5 |
| 1 | | ........................ | | |
| 2 | | ........................ | | |
| 3 | | ........................ | | |
| | | և այլն | | |
| | | Ընդամենը վարկի ժամկետով «..........» որ | | |
| | | ........................ | | |
| | | ........................ | | |
| | | և այլն | | |
| | | Ընդամենը վարկի ժամկետով «..........» որ | | |
| | | ........................ | | |
| | | ........................ | | |
| | | և այլն | | |
| | | Ընդամենը վարկի ժամկետով «..........» որ | | |
| | | ........................ | | |
| | | ........................ | | |
| | | և այլն | | |
| | | Ընդամենը վարկի ժամկետով «..........» որ | | |
| | | Բոլորը . . . . . . . | | |

Վճարված փաստաթղթերի գումարը և նրանց ըստ վարկի ժամկետների խմբավորման ճշտությունը հաստատում ենք՝

ԴԻՐԵԿՏՈՐ՝

ԳԼԽ. ՀԱՇՎԱՊԱՀ՝

ՀՀ Ազգային գրադարան
NL0193244

674

ԽՍՀՄ ՊԵՏԲԱՆԿ — Ձև № 3.

Բաժ. ________________ մարզի (երկրի)

________________ քաղաքի բաժանմունք

# ՀԱՇՎԱՐԿ

## ՀԱՏՈՒԿ ՓՈԽԱՏՎՈՒԹՅԱՆ № ______ ՀԱՇՎԻ ԳՈՐԾԱՐՔՆԵՐԻ

________________________________________

(տնտեսական կազմակերպության անունը)

1936 թվ. ________________ ից մինչև ________________ ը

### I. ՄԱՍ.—ՀԱՇՎԱՐԿ ՍԵՓԱԿԱՆ ՄԻՋՈՑՆԵՐԻ ՄԱՍՆԱԿՑՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ

| Բովանդակությունը | Գումարը | Բովանդակությունը | Գումարը |
|---|---|---|---|
| 1. Մուտք է չվել հատուկ հաշվին տարեսկզբից ստացված գում. | ______ | 6. Հանվում է մասնակցության հաշվին 1936 թվ. ______ ից մինչև ______ ը ժամ. համար (ռեեստրի 7-րդ սյուն.) . . | ______ |
| 2. Ծախսված է վարկավորման չենթակա ապրանքների վճարման համար (ռեեստ. 2-րդ սյուն. | ______ | 7. Ժամկետանց պարտք մասնակցություններից համաձայն հատուկ հաշվի անցած ստուգման . . . . . . . . . | ______ |
| 3. Վարկավորվող ապրանքների համար մնացող գումարը (1-2) | ______ | 8. Ընդամենը հանվում է սեփ. միջոց. մասնակցության հաշվին (6+7) . . . . . . | ______ |
| 4. Մուտք է չվել սեփակ. միջոց. մասնակցության գծով (« ..... » ռեեստ 3-րդ սյուն. գումարից) | ______ | 9. Սեփական միջոցների ազատ մնացորդը, որը փոխանցվում է հաշվարկային հաշվին (4-8) | ______ |
| 5. Պակասորդը սեփ. միջոց. մասն. համար (8-4) . . . . | ______ | | |
| Այդ թվում գանձվում է հաշվ. հաշվից . . . . . . . , . | ______ | | |
| Դրվում է ժամկետանցի վրա | ______ | | |

### II. ՄԱՍ.—ՀԱՇՎԱՐԿ ԲԱՆԿԻ ԺԱՄԿԵՏԱՅԻՆ ՓՈԽԱՏՎՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՐՄԱՆ ՄԱՍԻՆ

| Բովանդակությունը | Գումարը | Բովանդակությունը | Գումարը |
|---|---|---|---|
| 1. Պարտավորագրերի գումարը ժամկետային քարտատեկայում վեցօրյակի սկզբին . . | ______ | (5. …) ման հաշվարկային հաշվից կամ ժամկետանցի վրա դնելու (7-4) | ______ |
| 2. Մուտք է չվել նոր պարտավորագրեր . . . . . . . | ______ | 6. Պարտք հատուկ փոխատվ. հաշվով վեցօրյակի վերջին (մինչև մասնակց. ստուգումը) | ______ |
| 3. Հանված են պարտավորագրեր անցած ժամկետներով . . . | ______ | 7. Պարտ. հատուկ փոխատվ. հաշվով սեփ. միջոց մասնակց. կարգավորումից հետո . . | ______ |
| 4. Պարտավորագրերի գումարը հատ. փոխատվ. հաշվի ստուգման ժամանակին (1+2—3) . . | ______ | 8. Ժամկետային քարտատեկայի պարտավորագրերի գումարի գերազանցումը հանդեպ պարտքի (4—7) . . . . . | ______ |
| 5. Պարտքի գերազանցումը պարտավորագրերի գումարի հանդեպ, որը չենթակա չէ գանձ- (շարունակությունը՝ աջ սյունակում) | | | |

« ____ « ________________ 1936 թիվ.

ԲԱԺԱՆՄՈՒՆՔԻ ԿԱՌԱՎԱՐԻՉ ________________

ՎԱՐԿԱՅԻՆ ________________

ՀԱՆՐԱՊԵՏԱԿԱՆ ԳՐԱԴԱՐԱՆ
Пуб. Библиотека
ՀՍԽՀ-ССР
им. А. М...
332
իւ-11